Մրցույթ՝ Երևանի «Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և հայ գրականության (26 դասաժամ), քիմիայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Թեստավորման փուլն անցկացվելու է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձև 1),
-մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 2-ից 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մայիսի 19-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոցում. հասցեն՝ ք. Երևան, ՀԱԹ, Բ-2 թ., Բաբաջանյան 133/3: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 72 21 60 հեռախոսահամարով: